ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի նոյեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2019 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 52204.5 մլն դրամ՝ պլանավորված 49850 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 4.7 տոկոսով կամ 2354.5 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 8.7 տոկոսով կամ 4193.2 մլն դրամով:

Նոյեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3483.0 մլն դրամ:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 108 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 7 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 77 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 35.3 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 26 ստուգում՝ 31.5 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում հաշվետու ամսում մեկնարկել են լայնածավալ հսկողական միջոցառումներ՝ ուղղված հարկ վճարողների կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման դեպքերի բացահայտմանը, որոնց արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 37 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 67 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 50-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 2-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 5-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 10 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել 5 բռնագանձման հայց՝ 15574.1 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 13 հայցադիմում՝ 215 հազ. դրամ գումարով: Նույն ժամանակահատվածում ավարտվել են բռնագանձման հայցերով 1 գործ՝ 2015.2 հազ. դրամ

գումարով, վճարման կարգադրության հայցերով 6 գործ՝ 225 հազ. դրամ գումարով և 1 սնանկության գործ՝ 12613.8 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 132 վարչական գործով սահմանվել է 1.6 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7504 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 7173:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 56 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում նոյեմբեր ամսում կատարվել է վերադարձ 98 վարձու աշխատողի՝ 13.2 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 29 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության կողմից հաստատվել են «Մասնակիցների ռեեստրը վարողի և Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև տեղեկությունների փոխանակման կարգը և պայմանները հաստատելու մասին» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 984-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» որոշումները:

Ֆինանսների նախարարի հրամանով փոփոխություններ են կատարվել «Բարձր ռիսկային պարտավորություններ կուտակած հարկ վճարողների մասով իրականացվելիք միջոցառումների կանոնակարգը հաստատելու մասին» հրամանում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հաշվետու ամսում ԱՀ ֆինանսների նախարարության պատվիրակությունը՝ նախարարի գլխավորությամբ, գործուղվել է Հայաստանի Հանրապետություն: Ֆինանսների նախարարը հանդիպումներ է ունեցել ՀՀ ֆինանսների նախարարի և պետական եկամուտների կոմիտեի նախագահի հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկու հայկական պետությունների ֆինանսական և հարկային համակարգերի ինտեգրման հարցերի լայն շրջանակ:

Աշխատանքային քննարկումներ են կազմակերպվել նաև Հայաստանի և Արցախի հարկային մարմինների մասնագետների խմբերի միջև, որոնց արդյունքում երկուստեք ձևավորվել են առաջարկություններ առկա խնդիրների կանոնակարգման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության մեկ աշխատակից մասնակցել է «Տնտեսական համագործակցության և զարգացման» (OECD) միջազգային կազմակերպության կողմից Սլովենիայի Լյուբլյանա քաղաքում կազմակերպված «Շինարարության ոլորտում ստվերային տնտեսության կառավարումը» թեմայով սեմինարին, ևս երեք աշխատակիցներ՝ ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Հաշվետու ամսվա ընթացքում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների կողմից հաշիվների online կառավարումը դյուրինացնելու նպատակով կայքէջի «Հրապարակումներ» բաժնում տեղադրվել է «Մասնակցի հաշիվ» հավելված մուտք գործելու և հաշիվը կառավարելու ձեռնարկը, որում նկարագրվել են կենսաթոշակային հաշվում արտացոլված տվալների ստացման նպատակով online դիմումների ներկայացման, կենսաթոշակային հաշվի մնացորդի վերաբերյալ տեղեկատվության ստացման ընթացակարգերը, որոշակի ժամանակահատվածի համար պորտֆելի եկամտաբերության դիտման հնարավորությունները, ինչպես նաև կատարված կուտակումների դիտումը գրաֆիկների տեսքով:

Նոյեմբերի 7-ին հարկային մարմնում կայացել են հարկային ծառայության «Գ» և «Դ» խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կրկնակի փակ և բաց մրցույթներ, որոնց

արդյունքում 3 հաղթող ճանաչված մասնակիցներ նշանակվել են հարկային ծառայության պաշտոնների:

Նոյեմբեր ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 260, ելքագրվել՝ 170 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 6 գրություն, որից 1-ը՝ էլեկտրոնային եղանակով: